Մրցույթ՝ «Երևանի Ռ. Աբաջյանի անվան հ. 147 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 3 դասվարի (16 դասաժամ, 15 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դաս., 13 դասաժամ՝ ռուսերենով ուսուցմամբ դաս.), «Կերպարվեստ» (16 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (28 դասաժամ), «Անգլերեն» (4 դասաժամ), «Քիմիա» (8 դասաժամ),«Հայոց լեզու և գրականություն» (6 դասաժամ), «Ռուսաց լեզու» (16 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023թ. սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 14**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. սեպտեմբերի 15-ին՝ ժամը 13:00-ին**, Երևանի Ռ. Աբաջյանի անվան հ. 147 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Երևան Քանաքեռ-Զեյթուն,Կ. Ուլնեցի 1: Տեղեկությունների համար զանգահարել (010) 24-50-20, (099)-88-55-66 հեռախոսահամարներով: